Գործարքների իրականացման, պատվերների և հանձնարարականների ընդունման և կատարման ընթացակարգ

Հաճախորդը Բանկ է ներկայացնում պատշաճ ձևով լրացված Պատվեր 2 օրինակից: Պատվերները կարող են ներկայացվել թղթային կամ էլեկտրոնային եղանակով (ֆաքսիմիլային կապով կամ էլեկտրոնային փոստով): Պատվերը Բրոքերին ներկայացված է համարվում, եթե այն ներկայացվել է Հաճախորդի կողմից անձամբ կամ նրա լիազոր ներկայացուցչի կողմից, կամ ներկայացվել է Բանկ (Բրոքերին) համաձայն Բանկի հետ փոխհամաձայնեցված կապի միջոցներով: Հաճախորդի կողմից ներկայացված Պատվեր է համարվում նաև էլեկտրոնային առևտրային համակարգ Հաճախորդի կողմից ներմուծված այն Պատվերը, որի գծով գործարք է կնքվում այդ համակարգում:

Հաճախորդի կողմից Պատվերի թղթային տարբերակի ներկայացման պահ է համարվում Բրոքերի կողմից այն ընդունելու պահը: Պատվերը Բանկի կողմից ընդունված է համարվում Բրոքերի կողմից այն ընդունելու մասին նշում կատարելու պահից, էլեկտրոնային եղանակով ուղարկված Պատվերի դեպքում՝ դրա ընդունման վերաբերյալ համապատասխան էլեկտրոնային հաղորդագրության ուղարկման պահից, իսկ էլեկտրոնային առևտրային համակարգ Պատվեր ներմուծելու դեպքում՝ այդ Պատվերի ներմուծման էլեկտրոնային առևտրային համակարգի կողմից ֆիքսված պահը:

Բանկը իրավունք ունի մերժել Հաճախորդի Պատվերի ընդունումը Հաճախորդի (նրա լիազոր ներկայացուցչի) անձը հաստատող փաստաթղթի անհամապատասխանության կասկածի դեպքում, սահմանված ձևից շեղումներով կամ ջնջումներով ներկայացված Պատվերի դեպքում, եթե Հաճախորդի դրամական միջոցները կամ Արժեթղթերը, որոնց նկատմամբ տրվել է Պատվերը, ծանրաբեռնված են այլ անձանց իրավունքներով կամ կալանքի տակ են գտնվում (արգելադրված են), եթե Հաճախորդի անունը, անվանումը համընկնում է Բանկում ներդրված ՝Սև՞

ցուցակներում ներառված անձանց անունների, անվանումների հետ, եթե Հաճախորդի բրոքերային կամ դեպո հաշվում բացակայում են համապատասխան դրամական միջոցները (ներառյալ գործարքի կնքման համար անհրաժեշտ միջնորդավճարները) և/կամ Արժեթղթերը, եթե Հաճախորդի կողմից ներկայացված Պատվերով գործարքի կատարումը հակասում է Հաճախորդի ներդրումային փորձին և նպատակներին, Պատվերում նշված պայմանների՝ ՀՀ օրենսդրությանն ու Կանոններին անհամապատասխանության դեպքում:

Բանկն իրավունք ունի հրաժարվել Հաճախորդի Պատվերը կատարելուց այն դեպքում, երբ Պատվերի կատարումը հնարավոր չէ՝ կապված շուկայական իրավիճակների, գործարար շրջանառության սովորույթների և այլ օբյեկտիվ հանգամանքների հետ: Պատվերը կատարելուց հրաժարվելու դեպքում Բանկն այդ մասին անհապաղ տեղեկացնում է Հաճախորդին՝ վերջինիս Պատվերը կատարելուց հրաժարվելու վերաբերյալ համապատասխան հաղորդագրություն կամ ծանուցում ուղարկելու միջոցով:

Գործարքների իրականացման վայրը

Արժեթղթերով գործառնություններն ու գործարքները իրականացվում են երկրորդային շուկայում (այդ թվում բորսայական առևտրի միջոցով):